

ՄԽԻԹԱՐ ԱՅՐԻՎԱՆՅՈՒ «ՃԱՌԸՆՏԻՐ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ
ԱՌՆՁՈՒԹՅՈՒՆԸ «ՍԱՐԿԱՎԱԳՅԱՆ» ՑՈՒՑԱԿԻ ՀԵՏ

ԷԼՆՈՆՈՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

X—XIV դդ. հայ մատենագրության մեջ իրենց վերջնական ձևավորումը ստացան գրական այնպիսի ժողովածուներ, ինչպես Գանձարանը, Տոնացույցը, Ճառքնախորը, Հայսմավուրքը, Տոնապատճառը և այլն: Յուրատեսակ դարգացում ապրեցին նաև առհասարակ տարբեր նյութեր ընդգրկող ժողովածուները, որոնք նպատակ ունեին բավարար նյութ տրամադրել գիտնականներին, բարձրագույն կրթության ձգտող ուսումնասիրներին և հետաքրքրասեր մտավորականությանը: Եթե հնուց ավանդված Շարականոցը, Մաշտոցը, Ճաշոցը կամ նորաստեղծ Գանձարանը, Հայսմավուրքը և այլ ժողովածուներ կապվում էին եկեղեցական պաշտոնական ծեսերի ու արարողությունների հետ, ապա մյուս ժողովածուներն ու ձեռնարկները հետապնդում էին գիտական նպատակներ:

Հայ մատենագրության մեջ ժողովածուների ձևավորման այս վերջին ուղղության գծով երևան եկավ և Մխիթար Այրիվանեցու կազմած «Ճառքնախոր» կոչված ժողովածուն: Դա իր տեսակի մեջ ամենաճշտ և ողջ միջնադարում երբեք չգերազանցված մեղ հայտնի միակ մեծահարուստ հատորն է: Այն եղակի է նաև իր ընդգրկած նյութերի բնույթով ու շրանց բնագրերի ընտրությամբ: Այստեղ Մխիթար Այրիվանեցին գերագույն համբերությամբ ու խնամքով ընտրել է նոր և չին կտակարանների կանոնական բոլոր գրքերը, դրանց պարականոն գրքերի մեծ մասը, ինչպես նաև «նուրբ» կոչված գրքերը, ուր տեղ են գտել փրկիսոփայական, քերականական և այլ բնույթի բազմաթիվ երկեր:

Հստ երևույթին, Մխիթար Այրիվանեցին ստեղծելով այդ ժողովածուն, նպատակ է ունեցել ի մի խմբել իր ժամանակի համար հանձնարարելի, կարևորագույն և ճշգրտված բոլոր նյութերը:

Ասվածից հասկանալի է, թե ինչու հայագիտական մտքի զարգացման հարցերով զբաղվող մասնագետները պետք է հատուկ ուշադրություն նվիրեն այդ ժողովածուին: Հիրավի, դեռևս 1849 թ. Պ. Պետրոսյանը (Պատկանյան), էջմիածնում գտնված ժամանակ, նկարագրել է արդեն այնտեղ պահպանվող Մխիթար Այրիվանեցու ժողովածուն և նրանից ընտրելակել առանձին նյութեր: Դրանց մի մասը գտնվում է Վիեննայի, իսկ մյուս մասը՝ Նյուսադեմի մատենադարաններում¹: Շատ շանցած, քննության առարկա է դառնում մա-

¹ Այդ ընտրիկություններն ունեն հետևյալ խորագրերը. «Ճառքնախոր» (Հ. Տաշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 548—558), «Մատենագրութիւնք եւագրեայ Պաճաղայ» (Ն. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբյանց, Հ. 1, Երուսաղեմ, 1966, էջ 194—196), «Խորհրդատետր» (Ն. Պողարյան, Նշվ. աշխ., էջ 199—200), 1851 թ. Պ. Պետրոսյանի եղբայր Սերոբի Պետրոսյանը եղբոր օրինակից վերստին ընդօրինակել է Լիվադեր (Հ. Տաշյան, Նշվ. աշխ., էջ 614—617): Պ. Պետրոսյանն իր ընտրի-

տենագրական մի ցուցակ, որը (ինչպես պարզվում է հետագայում) կապվում է նույն ժողովածուի հետ: Այն զետեղված է Մխիթար Արիվանեցու մեկ այլ՝ «Պատմութիւն ժամանակագրական» աշխատության մեջ՝ հետևյալ խորագրով. «Կարգադրութիւնք գրոց սրբոց, որք ստուգաբանեցան ի Սարկաւազ վարդապետէն և գրեցան յինէն՝ ի տէր Մխիթար վարդապետէս պատմագրէ ի մին տուփ, յաւուրս ՃՀ»²: Այդ երկի 1867 թ. տպագրութիւնից հետո միայն³, մասնագետները հնարավորութիւն ունեցան զբաղվելու նշված ցուցակով: Սկզբում, քանի դեռ պարզված չէր Մխիթար Արիվանեցու ընդօրինակած ժողովածուի և նշված ցուցակի առնչութիւնը, ցուցակի խորագրի շուրջը ծավալվեցին հակասական կարծիքներ⁴:

Առաջինը Գ. Գալեմբյարյանն էր, որ ցուցակի տպագրված օրինակի, Պ. Պետրոսյանի ընդօրինակած նյութերի և էջմիածնի № 924 ձեռագրի նկարագրության համեմատության միջոցով երևան հանեց դրանց միջև եղած կապը և ապացուցեց, որ ցուցակում հիշատակված ընդօրինակող Մխիթարը ոչ այլ ոք է, քան Մխիթար Արիվանեցին, իսկ ընդօրինակված ժողովածուն էջմիածնի № 924 ձեռագրին է⁵, այսինքն՝ Մխիթար Արիվանեցու մեզ հետաքրքրող ժողովածուն: Դրանից հետո հայ և օտարազգի մասնագետները հնարավորութիւն ստացան տարբեր առիթներով անդրադառնալու ինչպես այդ ցուցակին (որը կոչեցին «Սարկավագյան» անունով), այնպես էլ Մխիթար Արիվանեցու ձեռագրի ժողովածուին: Նրանց աշխատանքներն ընթացան հիմնականում հետևյալ ուղղութիւններով.

ա) ուսումնասիրութիւններ՝ կապված ձեռագրում ընդօրինակված պառականոն գրքերի հետ և հրատարակութիւններ՝ կատարված այդ ժողովածուում գտնվող բնագրերից.

նակութիւններում, նկատելով ձեռագրի առանձնահատուկ բնույթը, կատարել է նաև բանասիրական քննութիւններ՝ ձեռագրի գրչութիւն, գրչի՝ Մխիթար վարդապետի անձնավորութիւն և այլ հարցերի շուրջ:

² «Մխիթարայ Արիվանեցոյ Պատմութիւն ժամանակագրական», Ս. Պետերբուրգ, 1867, էջ 33—36:

³ «Պատմութիւն ժամանակագրական» գրքի առաջին հրատարակութիւնը (1860 թ., Մոսկվա) կատարված է Մ. Էմինի կողմից: Այդտեղ, սակայն, մեզ հետաքրքրող ցուցակը բացակայում է, շնայած այն առկա է Մ. Էմինի օգտագործած բնագրի ձեռագիր օրինակում (Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 1723, Թերթ 39բ—41ա):

⁴ Ղ. Ալիշան, Շնորհալի և պարագա յուր, Վենետիկ, 1873, էջ 261; A. Carriere, Une version Armenienne de l'Histoire d'Assenethe, Paris, 1886, Գ. Զարբհանալյան, Հայկական Թարգմանութիւնք նախնայաց, Վենետիկ, 1889, էջ 190; Th. Zahn, Forschungen zur Geschichte des neutestamentliche Kanons und der altkirchlichen Literatur, V Teil, Lelpsig. 1893, S. 109—157.

⁵ Գ. Զարբհանալյանը, օրինակ, այն միտքը հայտնեց, թե ընդօրինակող պատմագիրը կոչվել է Մխիթար, բայց ապրել է Մխիթար Արիվանեցուց 100—150 տարի առաջ (Գ. Զարբհանալյան, նշվ. աշխ., էջ 190: Ըստ Թ. Յանի՝ «ՃՀ», օրը վերաբերում է Սարկավազին, որն այդ ժամանակամիջոցում ճշտել է Սուրբ գրքի կարգն ու ցանկը, իսկ Արիվանեցին ընդօրինակել է միայն այդ ցանկը (Th. Zahn, նշվ. աշխ., տես նաև այդ աշխատության մասին Հ. Տաշյանի գրախոսութիւնը, «Քանի մը նոր հրատարակութիւնք», «Հանդէս ամսօրեայ», 1895, էջ 1—3):

⁶ Գ. Գալեմբյարյան, Մխիթար Արիվանեցի և յուր նորագյուտ գրութիւնը («Հանդէս ամսօրեայ», 1891, էջ 161—167):

բ) ժողովածուի և «Սարկավագյան», «Կարգագրութիւնքի...» առնչութիւնները:

գ) «Նուրբ» կոչված գրքերի հետ առնչվող խնդիրների քննութիւնը՝ ըստ վերոհիշյալ ժողովածուի բովանդակութեան և «Սարկավագյան» ցուցակի տվյալների:

Առաջին խնդիրը, ինչպես նաև ժողովածուում գտնվող մյուս բնագրերի արժեքավորման և քննութեան հարցը դուրս է սույն հոդվածի շրջանակներից:

Երկրորդը մեղ հետաքրքրող հիմնական հարցն է, որ կարևորութիւն ունի ինչպես Մխիթար Այրիվանեցու, այնպես էլ Հովհաննէս Սարկավագի անվան հետ կապված մատենագիտական համապատասխան աշխատանքները զատորոշելու և գնահատելու առումով:

Ինչ վերաբերում է երրորդ հարցին, ապա այն ևս դուրս է մեր ծրագրից, թեև բարձրացված խնդրի պարզաբանումը մեծապես օգնելու է նրա հետագա քննութեանը:

Անդրադառնալով Մխիթար Այրիվանեցու ժողովածուի և «Սարկավագյան» ցուցակի առնչութիւններին, մասնագետների մի մասը (Ղ. Ալիշան, Հ. Ոսկյան, Մ. Տեր-Մովսէսյան)⁷, չխորանալով հարցի մեջ, գտավ, որ նշված ցուցակն ամբողջապես պատկանում է Հովհաննէս Սարկավագին, իսկ Մխիթար Այրիվանեցին հանդիսանում է լոկ այդ ցուցակով առաջնորդված համապատասխան երկերի ընդօրինակողը: Մասնագետների մի այլ խումբ քննութեան առարկա դարձրեց «Սարկավագյան» ցուցակում Մխիթար Այրիվանեցու կատարած փոփոխութիւնների հարցը: Ելնելով ցուցակի բովանդակած անկանոն գրքերի մեծ քանակից, առաջինը այդ առումով կասկած հայտնեց Ֆ. Մուրատը⁸, Հետագայում այն ավելի հանգամանալի քննութեան ենթարկեց Ն. Ակիւնյանը: Նա ցուցակում նկատելով Հովհաննէս Սարկավագի հետո կատարված թարգմանութիւններ (օրինակ, Եվագր Պոնտացու «Հարիւրաւորքը», Պրոկո Դիագոխոսի «Շաղկապք աստուածարանականքը»), առաջ քաշեց Մխիթար Այրիվանեցու միջամտութեան հարցը: Իսկ ավելի ուշ, քննվող առնչութիւնների պարզաբանման առումով, Ակիւնյանը հայտնաբերեց ուշագրավ մի փաստ: Բեյրութաբնակ Մանասե Գաբրիելյանի սեփականութիւնը հանդիսացող մի ձեռագրում նա գտավ Մխիթար Այրիվանեցու ժողովածուի կորած ցանկի ու հիշատակարանի ընդօրինակութիւնը և հղրակացրեց. «Թերևս Հովհաննէս Սարկավագ վարդապետի «Կարգագրութիւնքն» կընդգրկեն միայն «Լայն և նուրբ» կոչված գրութիւնները, այսինքն Ս. Գիրքն ու Ս. Հարց գործերը մինչև Եվագր»⁹: Ակիւնյանի կարծիքին միացավ նաև Օ. Սեքուլյան¹⁰:

7 Ղ. Ալիշան, Հուլիսի հայրենյաց հայոց. հ. 2, Վենետիկ, 1921, էջ 256: Հ. Ոսկյան, Հովհաննէս Սարկավագի կյանքը («Հանդէս ամսօրեայ», 1925, էջ 123—125), Մ. Թեր-Մովսէսյան, История перевода Библии на армянский язык, С. Петербург, 1902, стр. 92—103, 210—223, 238—247:

8 Ֆ. Մուրատ, Հայտնութիւն Հովհաննու, Երուսաղեմ, 1911, էջ ՄՂ—ՄՂԹ:

9 Ն. Ակիւնյան, Մատենագիտական հետազոտութիւններ, հ. Ա, Վիեննա, 1922, էջ 33—37: Նույնի «Մխիթար Այրիվանեցու Ճառքների նորագրութիւնը» («Ակոս», 1946, № 13, էջ 120—126):

10 Օ. Սեքուլյան, Նոր կտակարանի գրքերու կարգը հայոց քով, Վիեննա, 1949, էջ 33, 39:

ժամանակակից հայագետներից Հ. Անասյանը հանգեց մի նոր եզրակացության՝ նրա կարծիքով՝ ցուցակի «նուրբ» գրքերի մասում առկա Դիոնիսիոս Թրակացու, Պորփյուրի, Հերմեսի և Արիստոտելի աշխատություններն իրենց բովանդակությամբ անհամատեղելի են «Կարգադրութիւն գրոց սրբոց...» խորագրին, ուստի ամբողջ «նուրբ գրեանք» մասը կազմել և ցուցակ է մտցրել Մխիթար Արիվանեցին¹¹։ Այս տեսակետը, սակայն, առարկվեց Ռ. Իշխանյանի¹² և Լ. Խաչերյանի¹³ կողմից։

Ինչպես երևում է հարցի այս ամփոփ պատմությունից, Մխիթար Արիվանեցու ժողովածուի և «Սարկավագյան» կոչվող ցուցակի առնչությունները դարձել են քննության առարկա, նպատակ ունենալով պարզելու մատենագիտական բնույթի խնդիրները։ Ուստի, այսօր էլ դեռևս պարզված չէ, թե՞ արդյո՞ք Մխիթար Արիվանեցին հանդիսացել է սոսկ Հովհաննես Սարկավագի ստեղծած ցուցակի հիման վրա իր ժողովածուն ընթերցանակող գրիչ, թե՞ «Սարկավագյան» ցուցակը ստեղծագործաբար լրացնող, համապատասխան ժողովածուն ստեղծող հեղինակ։ Կամենալով հնարավորության սահմաններում պարզություն մտցնել այս կարևոր հարցի մեջ, նախ ամփոփ գծերով ներկայացնենք քննվող ժողովածուն։

Մխիթար Արիվանեցու «ձառնտիրը» պահպանվում է Մաշտոցի անվան Մատենադարանում՝ 1500 համարի տակ։ Այն գրված է Արիվանեցում՝ 1283 թ., 170 («ՃՀ») օրում¹⁴։ Գրիչն ու ստացողը՝ ինքը Մխիթար Արիվանեցին է։ Ձեռագիրը գրված է թղթի վրա և կազմված է 120 պրակից։ Յուրաքանչյուր պրակ ունի 10 թերթ։ Ներկայումս ձեռագիրը բաղկացած է 1190 թերթից։ Չափերն են՝ 35,7×26,5 սմ, երկսյուն է, բուրգի, տողերի քանակը՝ 52—59, կազմը՝ կաշեպատ տախտակ։ Լուսանցքներում առկա են մանրանկարչական բնույթի պարզունակ դժագրություններ, որոնց հեղինակները Սարգիս գրիչն ու Ստեփաննոս սարկավագն են։ Ձեռագիրն ունի ընտիր գրչություն, թեև գրված է մանր տառերով, չափազանց խիտ, գրեթե առանց բառանշատման, սակայն պարզ է, դյուրընթեռնելի, միաժամանակ և գեղեցիկ։ Արիվանեցին զգացել է թղթի խիտ պակաս, որի մասին ակնարկում է իր հիշատակարանում։ Այդ են վկայում նաև խիտ գրությունը, ձեռագրի կարկատված թերթերը, ձեռագրում բազմաքանակ աշխատությունների զատորոշման համար կիրառված խնայո-

¹¹ Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Ե—ԺԸ դդ., հ. Ա, Երևան, 1959, էջ XVII:

¹² Ռ. Իշխանյան, Հայ մատենագիտության պատմություն, պրակ Ա, Երևան, 1969, էջ 89—95:

¹³ Լ. Խաչերյան, Միջնադարի հայ մատենագիտության մի քանի հարցերի շուրջը («Բանբեր Մատենադարանի», № 10, Երևան, 1971, էջ 90—92):

¹⁴ Ձեռագրից պակասում է գլխավոր հիշատակարանը, որը, ինչպես նշեցինք, գտել է Ն. Ակինյանը («Մխիթար Արիվանեցվո ձառնտիրի նորագյուտ հիշատակարանը»)։ Այն իր համառոտ բովանդակությամբ թեև չի գոհացնում մասնագետներին, սակայն տալիս է ձեռագրի գրչության հետ կապված մի շարք հարցերի որոշակի պատասխանը։ Այստեղից է, որ հայտնի է դառնում ձեռագրի գրչության թվականը, վայրը և հաստատվում «Կարգադրութիւնում...» առկա այն փաստը, թե ամբողջ ձեռագիրը գրվել է «ՃՀ» օրում։ Հիշատակարանը գրված է չափածո և սկսվում է հետևյալ նշումով. «ԹՎ. ՁԼԲ (1283) գրեցի յԱյրիվանս յաւուրս ձ եւ Հ»։

Այս վկայության արձագանքը հանդիպում է նաև մեկ այլ աղբյուրում՝ «Տէր Մխիթար Արիվանեցին ղևատուածաշունչ գրեաց ՁԼԲ (1283) թվին, բաղում բանի հետ» (Ն. Պողոսյան, Ցուցակ ձեռագրաց, հ. 5, Երուսաղեմ, 1971, էջ 84):

ղական հնարանքները՝ նյութերը, մասերը որոշող լուսանցազարդերը, աշխատութիւնները միմյանցից անջատող պայմանական նշանները, բոլորականները (որոնց մեջ համառոտագրված են երկրի անունները) և այլն:

Այրիվանեցու ձեռագիրն, իր ընդհանուր տեսքով, մի ամբողջական հատոր է: Այստեղ չկան այն ենթախորագրային նշումները (Նոր կտակարան, Հին կտակարան, Նուրբ գրքեր), որոնք առկա են «Կարգագրութիւն գրոց սրբոցում»: Սակայն քննութիւնը ցույց է տալիս, որ Մխիթար Այրիվանեցին ամբողջ ձեռագիրն ընդօրինակել է իբրև երկու մասից կազմված մեկ ամբողջութիւն: Ընդ որում, առաջին մասում ընդօրինակել է Նոր կտակարանը, ծիսական բնութի գրքերը, Հին կտակարանը, ապա դրանք ամփոփել է Աստվածաշնչի կանոնական և պարականոն երկերն ընդգրկող 4 ցուցակներով¹⁵: Այնուհետև, նա էջի հաջորդ սյունակը թողել է ազատ (բացառիկ երևույթ այս ձեռագրի համար) և նոր էջից սկսել երկրորդ մասը՝ «նուրբ» կոչված գրքերի ընդօրինակութիւնը: Այս մասում, եկեղեցու առաջին հայրերի իմաստասիրական երկերի կողքին, բացառիկ արժեք են ներկայացնում Դիոնիսիոս Թրակացու, Հերմես Եռամեծի, Արիստոտելի, Պորփյուրի, Դավիթ Անհաղթի, Պրոկղ Դիագոնիսի աշխատութիւնների ընդօրինակութիւնները:

Մեզ հայտնի չէ, թե Մխիթար Այրիվանեցին ինչպես է կոչել իր ժողովածուն: Հետագայում, սակայն, ձեռագիրն ստացել է տարբեր անվանումներ՝ «Աստվածաշունչ», «Փիլոն գիրք», «Ճառքնախի», որոնցից և ոչ մեկը չի արտահայտում ձեռագրի բուն էությունը, չնայած վերջինս, մատենագիտական առումով, բովանդակում է այդ բոլորը:

Ձեռագրի բովանդակության քննութիւնը ցույց տվեց, որ այն մի կողմից Աստվածաշնչի գրքերի, իսկ մյուս կողմից՝ միջնադարում լայն ճանաչում գտած 13 խոշոր հեղինակների շուրջ 40 անուն աշխատութիւնների ժողովածու է: Նրա մեջ ամփոփված նյութերի թիվը՝ 100-ից ավելի է: Թեմատիկայի ընդգրկմամբ, դրանց ղասակարգմամբ, բնագրերի ամբողջությամբ այս ձեռագիրը հազվագյուտ գանձարան է: Գրչագիրը, ինչպես դիպուկ բնորոշել է Մ. Մովսեսյանը, ներկայացնում է մի «ամբողջ արխիվ այն գրական ստեղծագործութիւնների, որոնք կազմում էին հայերի գրական-աստվածաբանական գիտելիքների հիմքը միջին դարերում»¹⁶:

Ուշագրավ է նկատել, որ նման կառուցվածքով և բովանդակությամբ ժողովածու հայ մատենագրության մեջ ցայտմ հայտնի չէ: Չունենալով իր նախատիպը, ձեռագիրը, հավանաբար, ամբողջությամբ չի էլ ընդօրինակվել և այսօր միակն է, որի պատճառը պետք է փնտրել ամենից առաջ նրա ստվարածավալության մեջ (2400 էջ)¹⁷: Դժվար տեղաշարժելի ձեռագիրը մինչև 1697 թվականը գտնվել է Այրիվանքում¹⁸, որտեղից և փոխադրվել է էջմիածին: Ձեռագիրը ներկա վիճակում պակասավոր է՝ ընկած են սկզբի և վերջի թերթերը: Անդրադառնալով նրա ամբողջականությանը Մ. Տեր-Մովսեսյանը

¹⁵ Ձեռ. № 1500, Թերթ 369բ:

¹⁶ М. Тер-Мовсесян, *նշվ. աշխ.*, էջ 92:

¹⁷ Գրիշ Պ. Պետրոսյանը 1849 թ. ձեռագրից կատարած իր ընդօրինակութիւնում նախագաղափար օրինակը նշել է որպես 1200 թերթանոց ժողովածու՝ չխոսելով գլխավոր հիշատակարանի մասին, որը, հավանաբար, արդեն ընկած է եղել (Հ. Տաշյան, *նշվ. աշխ.*, էջ 555):

¹⁸ Ձեռ. № 1500, Թերթ 29բ, 328բ, 499ա:

ժամանակին դրել է, թե ձեռագրից պակասում է թերթերի մեծ մասը¹⁹։ Այս կարծիքը հավանական է համարվել մանավանդ այն պատճառով, որ «Սարկավագյան» կոչվող ցուցակի վերջում հիշված են ևս 10 այնպիսի գրքերի անուններ, որոնք չկան Մխիթար Այրիվանեցու ժողովածուի մեջ։ Սակայն ձեռագրի քննությունից պարզվում է, որ Մխիթար Այրիվանեցու ժողովածուից պակասում է սկզբից ընդամենը մեկ թերթ (տիտղոսաթերթը և ոչ բնագիր), իսկ վերջից սոսկ Արիստոտելին վերագրվող «Ցաղագս աշխարհաց» երկի ավարտը, ընդհանուր ցանկն ու հեղինակային հիշատակարանը։ Ինչ վերաբերում է «Կարգադրութիւն գրոց սրբոցի» վերջում հիշված 10 անուն գրքերին, ապա դրանք ժողովածուի հետ ոչ մի առնչություն չեն ունեցել²⁰։

Այս հարցի լուսաբանման համար կարևոր նշանակություն է ստանում Մխիթար Այրիվանեցու «Ճառերնոր» ժողովածուի կորած ցանկի և հիշատակարանի ն. Ակինյանի հայտնաբերած ընդօրինակությունը։ Դրանք փաստորեն գուրս են մնացել գիտական պատշաճ շրջանառությունից և հանդիսանում են հենց այն հիմքերը, որոնց միջոցով պատասխան է տրվում վերևում նշված հարցին։

Այդ նորահայտ ցանկն ունի հետևյալ խորագիրը. «Զայսոսիկ ժողովեցի ի մասին եւ գրեցի յաւուրս Ճ և Հ, ես՝ տէր Մխիթար վարդապետս»։ Այստեղ ևս, ինչպես Մխիթարի ժողովածուում, չկան «Կարգադրութիւն գրոց սրբոցի» վերջում նշված 10 անուն գրքերը։ Ցանկը վերջանում է «Իսկ զՎերլուծութեանցն չգտի» նշումով, որը վերաբերում է Արիստոտելին վերագրվող «Ցաղագս աշխարհաց» երկին հաջորդող նյութին։ Դա ցույց է տալիս, որ ժողովածուում նախատեսված էր ընդօրինակել «Վերլուծությունը», որ, սակայն, չի իրականացվել նախագաղափար օրինակը ձեռք չբերելու հետևանքով։ Ուստի, պարզվում է, որ Մխիթար Այրիվանեցու ժողովածուի վերջին նյութը եղել է «Ցաղագս աշխարհացը», այսինքն՝ այն երկը, որով այժմ ավարտվում է ժողովածուն։

Այս իրողությունը հաստատվում է նաև մեկ այլ ցուցակով, որը պահվում է Մատենադարանի № 680 ձեռագրում։ Այն կազմվել է XVIII դ. Մխիթար Այրիվանեցու ժողովածուի հիման վրա, երբ վերջինս արդեն զրկված էր իր ցանկից և գլխավոր հիշատակարանից։ Ցուցակն ունի մյուսներից տարբեր խորագիր, որին հաջորդում է բուն ցանկը և ավարտվում հետևյալ տեղեկությամբ. «Եւ ատուրք գրութեան սոցա ՃՀ օր» կարողութեամբն Աստուծոյ, ձեռամբ Մխիթարայ վարդապետի Այրիվանեցւոյ»²¹։ Այս ամբողջական ցանկում ևս վերջին գիրքը՝ Արիստոտելին վերագրվող «Ցաղագս աշխարհաց» երկն է, որը վերստին համապատասխանում է ժողովածուին։

Ի վերջո, կա մի ուշագրավ փաստ ևս։ Խոսքը Մատենադարանի № 8509 ձեռագրում պահվող ցուցակի մասին է, որը խորագիր չունի, սակայն, ինչպես ցույց տվեց քննությունը, Մխիթար Այրիվանեցու «Ճառերնոր» ժողովածուի ցանկի մեկ այլ, ավելի լիարժեք ընդօրինակությունն է։ Ցուցակն ամբողջական

¹⁹ М. Тер-Мовсесян, նշվ. աշխ., էջ 93։

²⁰ Հ. Անասյան, նշվ. աշխ., էջ XVII, ծան. 2։

²¹ Ձեռ. № 680, թերթ 222ա։

է և դարձյալ ավարտվում է «Յաղագս աշխարհաց» երկով, որին հաջորդում է նույն «Իսկ զՎերլուծութեանն ոչ գտի» ծանոթությունը²²:

Ահա, այս բոլոր ցուցակներն ու նշումները վկայում են, որ, իրոք, Մխիթար Այրիվանեցու «Ճառնարար» ժողովածուից այսօր բացակայում է ոչ թե 10 գիրք, այլ միմիայն «Յաղագս աշխարհաց» երկի վերջին մասը, ձեռագրի ցանկն ու հիշատակարանը:

Դա ինքնին խոսում է այն մասին, որ Մխիթար Այրիվանեցու ժողովածուն և նրա ցանկերն իրենց վերջին մասով տարբերվում են «Սարկավագյան» կոչվող «Կարգադրութիւն գրոց սրբոց...» ցուցակից: Անհրաժեշտ է նկատել, որ գոյություն ունեն Մխիթար Այրիվանեցու «Պատմութիւն ժամանակագրական» աշխատության մեջ պահպանված «Կարգադրութիւն գրոց սրբոց...» ցուցակի երկու ընդօրինակություններ ևս, որոնց վերջում առկա են նույն 10 երկերի անունները²³:

Այսպիսով, փաստորեն, մեր ձեռքի տակ եղած աղբյուրները բաժանվում են երկու խմբի. առաջինում տեղ են գտնում Մխիթար Այրիվանեցու ժողովածուն, Ն. Ակինյանի հայտնաբերած և № 8509 ձեռագրում պահպանված ցուցակները, ինչպես նաև ժողովածուից առաջացած № 680 ձեռագրի ցուցակը. իսկ երկրորդում՝ Մխիթար Այրիվանեցու «Պատմութիւն ժամանակագրական» երկում զետեղված «Կարգադրութիւն գրոց սրբոցի» երեք օրինակները²⁴:

Այդ բոլոր ցուցակների համար մեր կազմած համադրական տախտակից²⁵ համոզվեցինք, որ Մխիթար Այրիվանեցու ժողովածուի և «Սարկավագյան» կոչված ցուցակի առնչությունների լուծումը բացահայտվում է վերոհիշյալ երկու խմբերի միջև եղած տարբերություններով:

Իրկու խմբերի համատեղ քննությունից պարզվեց, որ նրանց միջև էական տարբերություններ գոյություն ունեն ոչ միայն հիշատակված 10 գրքերին վերաբերող մասում, այլև ուրիշ կետերում, որոնց վրա մասնագետները ուշադրություն չեն դարձրել: Ժիշտ է, այդ խմբերից յուրաքանչյուրում տեղ գտած ցուցակների միջև նույնպես կան ներքին տարբերություններ, սակայն դրանք գրչական շեղումների ու վրիպումների արդյունք են: Այլ են հիմնական խմբերի տարբերությունները, որոնք հեղինակային են և գալիս են Մխիթար Այրիվանեցու ինքնագրից: Ուստի, տվյալ դեպքում գիտական առանձին նշանակություն ունեն միմիայն այդ երկու խմբերի տարբերությունները:

Հենց սկզբից ասենք, որ, ի դեմս առաջին խմբի ցանկերի, մենք գործ ունենք Մխիթար Այրիվանեցու կազմած ժողովածուից առաջացած, նրա մեջ գտնվող երկերը թվարկող ցանկերի հետ, իսկ ի դեմս «Կարգադրութիւն գրոց

²² Ձեռ. № 8509, թերթ 79ա—79բ: Ցուցակի երրորդ՝ «նուրբ» գրքերի մասը հրատարակել է Հ. Անասյանը (նշվ. աշխ., էջ XLI—XLII):

²³ Ձեռ. № 582, թերթ 59բ—40ա: «նուրբ» գրքերի մասը, իբրև մատենագիտական ցանկ, հրատարակել է Հ. Անասյանը (նշվ. աշխ., էջ XLI—XLII): Մատենադարան, ձեռ. № 1723, թերթ 39բ—41ա:

²⁴ Մխիթար Այրիվանեցու «Պատմութիւն ժամանակագրական» երկը Պատկանյանը հրատարակել է № 582 և 1723 գրչագրերի հիման վրա, որոնց համեմատությամբ, սակայն, այն ունի էական տարբերություններ: Դա թույլ է տալիս նրանում տեղադրված ցուցակը քննելու իբրև առանձին օրինակ:

²⁵ Տեղի սղության պատճառով այդ տախտակներն այստեղ տալ չենք կարող:

սրբոց...» կոչվածի՝ մի ավելի նախնական ուղեցույց-ցուցակի հետ, որի հիման վրա կազմվել է քննվող ժողովածուն:

Նշված երկու խմբի ցուցակների միջև նկատվող էական տարբերությունների տեսակետից առաջնահերթ նշանակություն ունի այդ երկու խմբերի համար Մխիթար Այրիվանեցու մշակած խորագրերի տարբերությունը: Խոսքը Հովհաննես Սարկավազի անվան մասին է, որը հիշատակված է միայն երկրորդ խմբի ցուցակներում, իսկ առաջինում՝ ոչ: Հարց է առաջանում, ինչու Մխիթար Այրիվանեցին մի դեպքում ցուցակի հեղինակ է համարել Հովհաննես Սարկավազին, իսկ մյուս դեպքում այդ մասին լռել է:

Խորամուկ լինելով այս խնդրի քննության մեջ, համոզվում ենք, որ, իրոք, Հովհաննես Սարկավազն ունեցել է «սուրբ գրքերի» ճշգրտված ցուցակ, որը Մխիթար Այրիվանեցին հարստացնելով, դարձրել է իր ժողովածուի ստեղծման հիմքը: Ժողովածուի ցանկը կազմելիս Այրիվանեցին, բնականաբար, թվարկել է նրա ընդգրկած գրքերի խորագրերը և պարտադիր չէր, որ ցանկի խորագրում նա նշեր Հովհաննես Սարկավազի անունը: Այլ է եղել վիճակը «Պատմութիւն ժամանակագրական» երկում ցուցակը ղեկավարելիս: Այստեղ Հովհաննես Սարկավազի աշխատանքները թվարկելիս Մխիթար Այրիվանեցին ոչ թե իր ժողովածուի ցանկն է կամեցել ղեկավարել, այլ ժողովածուի համար ստեղծված այն ուղեցույց տախտակը, որը առաջացել է Հովհաննես Սարկավազի «Կարգադրութիւնի» հիման վրա: Նման պայմաններում նա, բնականաբար, լռել է իր կատարած հավելումների մասին, հիշեցնելով միայն, թե ինքն ըստ այդ ցուցակի «ԾՀ» օրում կազմել է ժողովածուն:

Այս հարցի լրիվ պարզաբանման համար կարևոր նշանակություն են ստանում ցուցակների Ա և Բ խմբերում առկա մյուս տարբերությունները: Դրանցից է, օրինակ, Պողոսի թղթերի ներկայացման կարգը: Ինչպես ժողովածուում, այնպես էլ Ա խմբի ցուցակներում այն ներկայացված է լուկ մի տարբերակով, մինչդեռ Բ խմբի ցուցակներում՝ երկու տարբեր դասակարգություն ունեցող տարբերակներով: Առաջին տարբերակն սկսվում է «Առ թեսաղոնիկեցիս», իսկ երկրորդը՝ «Հռոմայեցւոցն» թղթով: Ա խմբի ցանկում դրանցից առկա է միայն երկրորդը («Հռոմայեցւոցն»): Այդպես է նաև ժողովածուում: Ուշագրավ է, որ Բ խմբի ցուցակներում երկրորդ տարբերակը սկզբից ունի հետևյալ նշումը. «Իսկ ըստ գրութեանն Կղեմայ ուրախ եգիպտ», որը չկա Ա խմբի ցուցակներում²⁶:

²⁶ Պողոսի թղթերի այս տարբեր կարգերի վրա ուշագրություն են դարձրել Գ. Գալեմբյարյանը (նշվ. աշխ., էջ 163, ժան. 5), Ֆ. Մուրադը (նշվ. աշխ., էջ ՄՂ), Օ. Սեքուլյան (նշվ. աշխ., էջ 14) և եկել այն հետևություն, թե թղթերի առաջին տարբերակի («Առ թեսաղոնիկեցիս») հեղինակը Հովհաննես Սարկավազն է, իսկ երկրորդինը («Հռոմայեցւոցն»)՝ Ի. Գ. հեղինակ Կղեմես Հռոմեացին, որի ցանկը «Կարգադրութիւն գրոց սրբոց» մեջ է մտցրել դարձյալ Հովհաննես Սարկավազը: Այս վարկածի համար նրանք հենվել են «որպէս եգիպտ արտահայտության վրա: Սակայն հարցի ուսումնասիրությունը մեղ հանգեցրեց այլ եզրակացության:

Միջնադարյան հեղինակներից Պողոսի թղթերով ղեկավարվել է Գեորգ Կաղ վարդապետը: Նրանից մեղ հասած «Յազագա շարակարգութեան ԴԺ թղթոցն Պողոսի» աշխատությունը (Մատենադարան, ձեռ. № 4139, թերթ 412բ) լույս է սփռում հիշյալ արտահայտության վերծանության վրա: Թղթերն այստեղ ունեն երկու դասակարգում, որոնք նույնանում են «Կարգադրութիւն գրոց սրբոցում» եղած համանուն երկու ցանկերի հետ: Թղթերի առաջին դասակարգումը («Առ թեսաղոնիկեցիս»), Գեորգ Կաղի բացատրության համաձայն, հիմնված է նրանց առաջման ժամանակագրական կարգի վրա, իսկ երկրորդը («Առ հռոմայեցիս»)՝ բովանդակության, իմաստի:

Այնուհետև՝ ոչ ժողովածուում և ոչ էլ դրանից ծագող Ա խմբի ցուցակներում չկան «Զորորորդ մակարայեցի» և «Յովսեփոս որ է Կախափայ քահանայապետ» դրքերը, մինչդեռ դրանք կան Բ խմբի, այսինքն՝ «Կարգադրութիւն գրոց սրբոցի» բոլոր տարբերակներում: Դա ցույց է տալիս, որ Մխիթար Այրիվանեցին ինչ-ինչ պատճառներով նշված երկու գրքերը չի զետեղել իր ժողովածուում: Հիրավի, խորամուխ լինելով ժողովածուի բնագրի քննության մեջ, հանդիպում ենք հեղինակային համապատասխան նշման: Նա Մակարայեցոց երրորդ թղթից հետո ծանոթագրել է «դ՛րդ (չորրորդ) մակարայեցիսն ոչ գտի և ոչ զՅովսեփոսն, որ է Կախափա, որ դրեալ էի ի դիրսս» (ձեռ. № 1500, թերթ 230բ): Հայտնի է, որ այստեղ էլ Մխիթարը, հիմք ունենալով մի որո-

ուշագրավ է նկատել, որ աշխատության մեջ վերջինս կապվում է Կղեմի անվան հետ, որի մասին Գեորգ Կազը գրում է. «Այլք ասացին, եթէ ի գիւտ թղթոցն ընթացաւ Կղեմ, որպէս եգիտն շարադարեաց: Եւ այս գիտելի է, զի զգտեալ թուղթսն գալարելով ըստ աւրինի նամակի, որպէս գրեալ էր, զգուշութեամբ պահեցին, ապա յետոյ շարակարգեցին ի գրոց օրինակ, որ յայտ է ոչ հանդիպմամբ, այլ խորհրդեամբ եղեալ, որպէս կարգն ցուցանէ» (Մատենադարան, ձեռ. № 1320, թերթ 6բ—7ա): Իսկ Մատենադարանի ձեռ. № 1138-ում (թերթ 307բ) Կղեմի գլուտի մասին գրված է. «Եւ այլ եթէ ըստ գիւտ ի թղթոցն որպէս եգիտ Կղեմ, այնպէս շարագրեացաւ: Այսպիսով, բերված օրինակները, մեզ հիմք են տալիս ասելու, որ «Կարգադրութիւն գրոց սրբոցի» թղթերի երկրորդ կարգի համար բերված ենթախորագրային նշումը վերցված է Գեորգ Կազի: Հիշյալ աշխատությունից, ուստի «եգիտը» վերաբերում է Պողոսի թղթերը հայտնաբերած Կղեմին և ոչ թե «Կղեմի կարգը հայտնաբերած Սարկավագին»: Հիշենք նաև, որ այդ կարգը նորություն չէր հայ մատենագիրների համար: Այդպիսին չէ, սակայն թղթերի կարգը ըստ ժամանակագրության: Գեորգ Կազի աշխատությունից հայտնի է, որ նա օգտվել է Հովհան Ոսկերեանի մեկնություններից (ձեռ. № 1138, թերթ 307բ. «Յոհան Ոսկերեան ցուցանէ թէ...»), սակայն կենսագրական տեղեկությունները պակասում են (Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942, էջ 463, 0. Սեքուլյա, նշվ. աշխ.): Ժամանակաշրջանը որոշվում է ենթադրաբար՝ XI դ.: Ուստի դժվար է ասել, արդյո՞ք Գեորգ Կազն է Սարկավագի սկզբնաղբյուրը, թե՞ վերջինս, անկախ նրանից, նույնպես օգտվել է Ոսկերեանի աշխատությունից: Պարզ է, որ թղթերի առաջին կարգը ցանկի վերածված հանդիպում է միայն այս ցուցակում, ներկայացնում է դրանց ճշգրտված, ստուգաբանված կարգը, որով և առնչվում է Սարկավագի այդ տիպի աշխատանքներին:

Զիտելով Սարկավագի ծանոթությունը Գեորգ Կազի հետ, որը հանդիսացել է նաև Գրիգոր Արասյանի օգտագործած հեղինակներից մեկը, մենք կարծում ենք, որ Մխիթար Այրիվանեցին նույնպես ծանոթ է եղել Գեորգ Կազի աշխատություններին, և Պողոսի թղթերի Կղեմյան կարգը, հիշյալ նախադասության հետ միասին, նա է մտցրել ցուցակ: Այդպես մտածելու հիմք է տալիս հետևյալը. Հովհաննես Սարկավագը իր ճշգրտված, քննված ցուցակում չէր կարող ներկայացնել միևնույն թղթերի երկու տարբեր կարգադրություններ, առաջացնելով երկմտանք, թե ո՞րը դրանցից դիտել ստույգ: Նա պետք է ընտրեր մեկը, ստույգը, որը և համարել է առաջինը:

Այս հարցի վրա որոշ լույս է սփռում Մխիթար Այրիվանեցու ժողովածուն, ուր նախընտրությունը տրված է Կղեմի կարգադրությանը, դրա կողքին, յուրաքանչյուր թղթին կից համապատասխան լուսանցքում նշելով նրա տեղը «ստույգ» համարվող գրությունում: Այդպես, առաջին թղթի մոտ կարդում ենք. «Թուղթ առ հոռմացեցիս: Կղեմա նախակարգեալ: Այլ սա Ե (5) երրորդ է ստույգ, երկրորդում՝ «Առ կորնթացիս առաջին թուղթ, երրորդ է թուղթս ըստ գրութեան» և այլն: Այսպիսով, պարզ է դառնում հետևյալը. Մխիթար Այրիվանեցին իր կազմած ցուցակում անփոփոխ թողնելով Պողոսի թղթերի Սարկավագյան կարգը, դրա կողքին, անմիջապես իբրև շարունակություն, տեղադրել է թղթերի՝ հայկական կանոնով ընդունված Կղեմյան կարգը (նկատի չունենք Առ կորնթացիս երրորդ պարականոն թուղթը, որը Մխիթար Այրիվանեցին է մտցրել ցուցակ): Եվ ապա, առաջնությունը տալով վերջինիս, նա ըստ այդմ թղթերը ընդօրինակել է ձեռագրում և համապատասխան ձևով էլ նշել ձեռագրի ցանկում, որով և առաջացել են նշված տարբերությունները:

շակի ուղեցույց, փորձել է բացատրել դրանից շեղվելու պատճառը: Հենց այդպիսին է Հովհաննես Սարկավազի անվամբ նրա ներկայացրած ցուցակը (Բ խումբ), ուր նշված են այդ երկու գրքերը: Եվ թեև Բ խմբի խորագրում նշված է հիշյալ ժողովածուի ընդօրինակության մասին, ապա պարզ է, որ Այրիվանեցին նկատի է ունեցել Բ խմբի համար հիմք ծառայած ուղեցույց ցուցակը²⁷:

Երկու խմբի ցուցակների էական տարբերություններից է ժողովածուի ավարտին (Արիստոտելին վերադրվող «Ցաղագս աշխարհաց» երկին) հաջորդող նշումը. «Իսկ ղՎերլուծութեանցն չգտի» (տրբ. «ոչ գտի», «չգտայ»): Դրան համապատասխան՝ «Վարդադրութիւն գրոց սրբոցում» որպես հաջորդ գիրք նշված է «Վերլուծութեանցն»: Հասկանալի է, որ Մխիթար Այրիվանեցին առաջնորդվել է այս վերջին ցուցակի նախօրինակով և ժողովածուն կազմելու ժամանակ չգտած բնագրի մասին տվել բացատրություն, թե ինչու «Ցաղագս վերլուծութեան» աշխատությունը չկա իր ժողովածուի մեջ:

Ուշագրավ են նաև Ա և Բ ցուցակներում թվարկված գրքերի նշումների եղանակը և ձևակերպումների տարբերությունները:

Կան ձևակերպումների նաև շատ ուրիշ տարբերություններ, որոնք խոսում են, իրոք, երկու տարբեր ծագում ունեցող ցուցակների գոյության մասին, սակայն, դրանց բոլորին անդրադառնալն անհարկի կլինի:

Քննվող խմբերի միջև եղած տարբերություններից մեկն էլ վերևում հիշված 10 գրքերի առկայությունն է Բ խմբի ցուցակներում և բացակայությունը թե՛ Ա խմբից, և թե՛ ժողովածուից: Ինչպես արդեն ասվեց, այն կապ չունի Մխիթար Այրիվանեցու ժողովածուի հետ և ներմուծված է հետագայում: Ուշագրավ է, սակայն, որ այն ներմուծված է սոսկ Բ խմբի ցուցակներում, որպես «նուրբ» գրքերի լրացում:

Այսպիսով, խորամուխ լինելով Մխիթար Այրիվանեցու ժողովածուի հետ առնչվող ցուցակների համատեղ քննության մեջ, տեսնում ենք, որ դրանք բաժանվում են 2 տարբեր խմբերի: Դրանցից առաջինը ծնվել է այդ ժողովածուն ստեղծվելուց հետո՝ որպես նրա ցանկից կատարված ընդօրինակությունների փունջ, իսկ երկրորդը՝ ժողովածուից առաջ՝ Մխիթարի ստեղծած ուղեցույց ցուցակից, որպես նրանից կատարված ընդօրինակությունների փունջ: Եվ քանի որ այդ ուղեցույցի հիմքում ընկած են եղել Հովհաննես Սարկավազի ճշգրտած ձեռագրերի ցուցակը, ինչպես նաև այլ ցուցակներ, ուստի, Մխիթար Այրիվանեցին մեկ այլ առիթով («Պատմութիւն ժամանակագրական» երկը շարադրելիս) ամբողջ ուղեցույցը վերագրել է Հովհաննես Սարկավազին: Դրա հետևանքով էլ նրա կազմած ժողովածուի ողջ հիմքն ու պատմությունը փաստորեն վերագրվել է Հովհաննես Սարկավազին:

Այժմ, երբ բացահայտվում է ցուցակների ծագման հարցը, պարզվում է, որ Մխիթար Այրիվանեցին հանդիսացել է ոչ թե սոսկ ձեռագիր ընդօրինակող գրիչ, այլ Հովհաննես Սարկավազի և այլոց ցուցակների հիման վրա մի նոր ուղեցույցալին ծրագիր ստեղծող և ըստ այդմ իր ժողովածուն կազմող հեղինակ:

²⁷ Ենթադրում ենք, որ այդ ուղեցույցում նշված են եղել նաև Եվազր Պոնտացու «Վարքն» ու Դավիթ Անհաղթի «Վերլուծութիւն ընդօրինակութեանցն» Պորփիրիա աշխատությունները, որոնք ընդօրինակված են ձեռագրում, բայց չեն արտացոլված երկու խմբերի ցուցակներում:

Մխիթար Այրիվանեցու «Կարգադրութիւն գրոց սրբոց» խորագրին բանասերները տվել են այլ բացատրություն՝ կապված Հովհաննես Սարկավազի բնագրագիտական աշխատանքների հետ: Ինչպես հայտնի է, Սարկավազը զբաղվել է բնագրերի վերականգնման, ճշգրտման աշխատանքներով: Նրա վերականգնած բնագրերից պահպանվել են Սաղմոսարանն ու Դավիթ փիլիսոփայի «Սահմանք իմաստասիրական» աշխատությունները: Ելնելով այս օրինակներից, ինչպես նաև Կիրակոս Գանձակեցու այն վկայությունից, ըստ որի Սարկավազը «գրեաց օրինակս ստույգ գրոց», Ղ. Ալիշանն ու Հ. Ոսկյանը հզորակացրել են, որ Հովհաննես Սարկավազը Այրիվանեցու ցուցակում բերված ամբողջ գրականությունը, այդ թվում և «նուրբ» գրքերը «ստուգել և յստակել և այնպես օրինակել տուել էր իր աշակերտաց»: Ավելին, խորացնելով այդ միտքը, Ալիշանը գտնում է, որ Այրիվանեցին իր ձեռագրում հավաքել և ընդօրինակել է Սարկավազի ստուգաբանած բնագրերը: «Այս պրպտող պատմագիր վարդապետս, որ 150 տարի Սարկավազեն հտե գրող է, անոր ստուգած Ս. գրքերը գտել և օրինակել է ամբողջ մեկ մեծ հատոր մը ձևացնելով»²⁸ — գրում է նա: Ալիշանի այս կարծիքը հաստատող փաստերը պակասում են: Այդուհանդերձ, հնարավոր եղավ ճշտել հետևյալը.

Մխիթար Այրիվանեցու ժողովածուում ընդօրինակված է Հովհաննես Սարկավազի ստուգաբանած Սաղմոսարանը: Վերջինիս ընդօրինակության (Մատենադարան, ձեռ. № 10182) համեմատությունը Մխիթար Այրիվանեցու ձեռագրում ընդօրինակված Սաղմոսարանի բնագրի հետ պարզեց ղրանց նույնությունը: Ժիշտ է, փաստը եզակի է, սակայն այն անհավանական չի դարձնում, որ Մխիթար Այրիվանեցու ժողովածուում տեղ գտած աշխատությունների ընտիր և ամբողջական բնագրերի թեկուզ և որոշ մասը կարող են ներկայացնել սարկավազյան ճշգրտված, ստուգաբանված օրինակներ:

ОТНОШЕНИЕ СБОРНИКА «ГОМИЛИАРИЙ» МХИТАРА АЙРИВАНЕЦИ К «САРКАВАГСКОМУ» СПИСКУ

ЭЛЕОНОРА АРУТЮНЯН

Резюме

«Гомилиарий» (Матенадаран им. Маштоца, рук. № 1500), составленный автором XIII в. Мхитаром Айриванеци, содержит важнейшие образцы более ста сочинений теологического и философского характера как оригинальной, так и переводной литературы, известной в Армении до этого.

По своей структуре сборник тесно связан с библиографическим списком, имеющимся в другом произведении того же автора, в его «Хронографической истории». Список этот известен под названием «Распределение св. книг, проверенных вардапетом Саркавагом, списанных мною, историком вардапетом Мхитаром за 170 дней в одну книгу».

²⁸ Ղ. Ալիշան, Հովհիկ հայրենյաց հայոց, հ. 2, էջ 255—256:

Специалисты высказывали различные мнения по вопросу об отношении сборника Мхитара к списку, оставляя однако невыясненным характер работы, проделанной над сборником Мхитаром Айриванеци.

На основании новых данных, почерпнутых при изучении аналогичных списков, связанных со сборником Мхитара Айриванеци, установлено, что списки эти делятся на две группы: в первую группу входят списки, составленные после создания сборника, а во вторую—до его создания. Списки второй группы являются поздними переписками списка-указателя, составленного Мхитаром Айриванеци.